

«ՅԾ-Ինտերնետ Բանկ»**Հեռակառավարման համակարգի տեղեկատվական ամփոփագիր**

05.12.2018թ.

«ՅԾ-Ինտերնետ Բանկ» համակարգը (այսուհետ՝ Համակարգ) նախատեսված է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաշվետեր հաճախորդների համար (այսուհետ՝ Հաճախորդ):

Համակարգը հասանելի է նաև **Converse Mobile** բջջային հավելվածի տեսքով:

Համակարգի Օգտագործողի ձեռնարկին կարող եք ծանոթանալ Բանկի [կայքում](#):

Համակարգի հնարավորությունները

Հետևյալ գործարքները կարող են կատարվել շուրջօրյա՝ այդ թվում նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին.

1. Նույն արժույթով ներբանկային փոխանցում հաճախորդի հաշիվների միջև (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների), ընդ որում՝ մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը՝ 5,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
2. Տարբերվող արժույթով ներբանկային փոխանցում (արտարժույթի փոխանակում) հաճախորդի հաշիվների միջև, ընդ որում՝ մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը՝ 300,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, գործարքների օրական առավելագույն քանակը՝ 5, գործարքների օրական հանրագումարային առավելագույն սահմանաչափը՝ 1,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
3. Նույն արժույթով ներբանկային փոխանցում հաճախորդի հաշվից այլ հաճախորդի հաշվին (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների), ընդ որում՝ մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը՝ 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, գործարքների օրական առավելագույն քանակը՝ 10, գործարքների օրական հանրագումարային առավելագույն սահմանաչափը՝ 2,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
4. Կոմունալ վճարումներ:

Համակարգով ոչ աշխատանքային օրերին, աշխատանքային ժամերից դուրս Հաճախորդի կատարված այլ գործարքները Բանկը կատարում է հաջորդող աշխատանքային օրը:

Համակարգը հնարավորություն է տալիս դիտել հետևյալ տեղեկատվությունը՝

- բանկային հաշիվների մնացորդներն ու գործառնությունները
- հաշիվների, բանկային քարտերի, վարկերի, ավանդների քաղվածքները
- բանկային քարտերի օնլայն մնացորդները
- վարկերի վերաբերյալ տեղեկատվությունն ու մարման ժամանակացույցը
- ավանդների վերաբերյալ տեղեկատվությունը
- արտարժույթի փոխարժեքները
- ստացված և ուղարկված նամակները
- կատարված վճարումների և փոխանցումների ցանկը

Համակարգը հնարավորություն է տալիս կատարել հետևյալ գործարքները՝

- փոխանցում՝ միջազգային և ՀՀ տարածքում (նաև խմբային), այդ թվում՝ պետական բյուջե
- արտարժույթի փոխանակում
- վարկի մարում (քարտային հաշիվներից մարումներ չեն կատարվում)
- ավանդի բացում, համալրում
- կոմունալ/խմբային կոմունալ վճարում
- փաստաթղթերի խմբագրում, պատճենում և չեղարկում

Համակարգը հնարավորություն է տալիս ներկայացնել հետևյալ հայտերը՝

- ավանդի բացման հայտ
- կանխիկացման հայտ
- Տրանսֆեր Քարտին մուտքագրման հայտ
- անձնական տվյալների փոփոխման հայտ
- SMS ծառայության հայտ
- սահմանաչափերի փոփոխման հայտ

Համակարգը հնարավորություն է տալիս նաև՝

- ուղարկել և ստանալ ազատ ֆորմատի նամակներ կցված ֆայլերով (MS Word, Excel և այլն)
- ներմուծել տվյալներ .xml ֆորմատով ֆայլից
- ստեղծել փաստաթղթերի ձևանմուշներ (շաբլոններ)

Սակագներ

Ֆիզիկական անձանց դեպքում՝ առանց անվտանգության սարքի

Ծրագրի սպասարկման վճար	0 ՀՀ դրամ
------------------------	-----------

Ֆիզիկական անձանց դեպքում՝ անվտանգության սարքի կիրառմամբ

Անվտանգության սարքի արժեք	8,000 ՀՀ դրամ միանվագ
Ծրագրի սպասարկման վճար	0 ՀՀ դրամ

Իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձ չհանդիսացող/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների դեպքում

Ծրագրի սպասարկման վճար՝ եռամսյակի ընթացքում 45 և ավելի գործարք կատարելու դեպքում	0 ՀՀ դրամ
Ծրագրի սպասարկման վճար՝ եռամսյակի ընթացքում մինչև 45 գործարք կատարելու դեպքում	10,000 ՀՀ դրամ եռամսյակային
Յուրաքանչյուր օգտագործողի վճար	600 ՀՀ դրամ ամսական

Անվտանգության սարքի արժեք	8,000 ՀՀ դրամ միանվագ
Կրկնակի ապահովմամբ անվտանգության սարքի արժեք	12,000 ՀՀ դրամ միանվագ

Ծրագրի սպասարկման վճարները հաշվարկվում են Համակարգից օգտվելու ամսվան հաջորդող եռամսյակի համար, իսկ գանձումն իրականացվում է եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

[«ՀԾ - ԻնտերնետԲանկ» ծառայության ստացման հայտ](#)

Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) դեպքում՝

- Անձը հաստատող փաստաթուղթ

Իրավաբանական անձանց դեպքում՝

- Իրավաբանական անձի տնօրենի, եթե վերջինիս լիազորությունները իրավաբանական անձի կանոնադրությամբ որևէ կերպ սահմանափակված չեն
կամ
- այլ անձի, ով ունի իրավաբանական անձի անունից գործելու լիազորագիր, անձը հաստատող փաստաթուղթը

Փոխանցումների կատարման ժամկետներ

ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով դեպի այլ բանկ փոխանցումները կարող են կատարվել Նույն բանկային օրը, եթե վճարման հանձնարարականները ներկայացվել են մինչև տվյալ բանկային օրվա 15:00:

15:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ բանկային օրը:

Ռուբլիով փոխանցումները կարող են կատարվել Նույն բանկային օրը, եթե վճարման հանձնարարականները ներկայացվել են մինչև տվյալ բանկային օրվա 12:00:

12:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ բանկային օրը:

Այլ արժույթներով փոխանցումները կատարվում են 3 բանկային օրվա ընթացքում:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող., 15

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511211
- Skype՝ conversebank-callcenter